ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«31» հուլիսի 2020 թվականի N 208

ՀԵՆՐԻԿ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով, նկատի ունենալով, որ 2020 թվականի օգոտոսի 1-ին լրանում է Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանի՝ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին, հիմք ընդունելով Հենրիկ Միրզոյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1.Թույլատրել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանին շարունակել զբաղեցնել համայնքային ծառայության պաշտոնը մեկ տարի ժամկետով՝ մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 31
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«04» օգոստոսի 2020թ. № 207

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱՂԱՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԿԻՄԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Արմեն Վոլոդյայի Սարգսյանի և Ցողիկ Գառնիկի Բարսեղյանի դիմումը, Սպիտակի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 3-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել օտարել Սպիտակ համայնքի Վարպետաց թաղամաս Երիտասարդության փողոց 10 հասցեի բնակելի տան (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03032020-06-0008 վկայական)՝ անչափահասներ Աղասի Արմենի Սարգսյանի, Կիմա Արմենի Սարգսյանի և Հովհաննես Արմենի Սարգսյանի բաժինները:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. օգոստոսի 4
ք. Սպիտակ